ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

Օսմանյան կայսրությունը գոյատևեց մոտ վեց դար՝ խոր կնիք դնելով իր տիրապետության տակ ընկած ժողովուրդների պատմական ընթացքի վրա։ Արտաքնապես հզոր երևացող հսկայածավալ կայսրությունը ներքնապես երբեք չամրապնդվեց և ապրեց երկարատև ճգնաժամի ու անկման պրոցես։ Պատմական այդ երևույթի պատճառները բազմաթիվ են, գալիս են անցյալի խորքից և օրգանական կապերով կապված են կայսրության անցած դարավոր ուղու ու դրա կեռմանների հետ։ Քննենք դրանցից գլխավորները։

Մի քանի խոսք պատմական պատճառների մասին։ Ամենից առաջ հիշատակության արժանի են Օսմանյան կայսրության տարածքում մի քանի դար տևած և խոր հետքեր թողած վաչկատուն ցեղերի ու ժողովուրդների ավեր ու քայքայում բերող տեղաշարժերը։ Թուրք-սելջուկներին հետևեցին մոնղոլական արշավանքները։ Այնուհետև, հրով ու սրով իրենց տիրապետությունը հաստատեցին թուրք օսմանները։ Դրանց բացասական հետևանքներն ակնառու են հատկապես կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման վրա, որը երբեմն դարերով ետ էր մղվում իր բնականոն ընթացքից։ Վ. Ի. Լենինը, ի նկատի ունենալով նման պատմական խոշոր իրադարձությունները և մեծ դարաշրջանները, գտնում էր, որ «Ցուրաքանչյուր դարաշրջանում լինում են և կլինեն առանձին մասնակի շարժումներ մերթ դեպի առաջ, մերթ դեպի ետ, լինում են և կլինեն զանազան շեղումներ միջին տիպի և միջին տեմպի շարժումներից»[1]։ Ինչպես հայտնի է, բյուրեղանդակաև զարգացած ֆեոդալիզմը քայքայվեց սելջուկների հետզհետե ուժեղացող հարվածներից։ Սելջուկյան պետությունում զարգացման որոշ աստիճանի հասած ֆեոդալական հարաբերությունները ոչնչացվեցին մոնղոլների և ապա թուրք-օսմանների արշավանքների հետևանքով։ Նշված տեղաշարժերն ի վերջո ծառայեցին իսլամի տարածմանը և դարձան թյուրքական ցեղերի միավորման և որպես ժողովրդի ձևավորման յուրահատկություններից մեկը։ «Ուրեմն թուրքական պատմությունը,— գրում է Դ. Երեմեևը,— երկու անգամ անցել է առաջին, իր էությամբ նույն, ֆեոդալիզմի զարգացման փուլը։ Այլ խոսքով, թուրքերը երկու անգամ «սկսել են զրոյից»[2]։ Պարզ է, որ զրոյից սկսելու մեղքն ամբողջապես ընկնում է հենց իրենց՝ թուրքական ցեղերի և ապա մոնղոլների վրա, որոնք ավեր ու թալանով դարերի ընթացքում քայքայեցին իրենց տիրապետության տակ ընկած ժողովուրդների տնտեսությունն ու կուլտուրան, խախտեցին կյանքի բնականոն ընթացքը։

Թուրքիայի հետամնացության մյուս վճռական գործոնը մշտապես շարժման մեջ գտնվող վաչկատուն ցեղերի, ցեղախմբերի ու ժողովուրդների կյանքում տիրապետող նահապետական-համայնական փոխհարաբերություններն էին, որոնք դարեր շարունակ լրջորեն խոչընդոտում էին հասարակական հարաբերությունների զարգացմանը։ «Վաչկատունները,— գրում է Մ. Մեյերը,—

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 26, էջ 169*

[2] «Народы Азии и Африки», 1981, № 2, с. 64—65.

լուրջ ազդեցություն ունեցան ինչպես տնտեսական կյանքի (սահմանափակելով էքստենսիվ հողագործության հնարավորությունները), այնպես էլ սոցիալական զարգացման (կոնսերվացնելով նահապետական-ավատական հարաբերությունները՝ ցեղական-արյունակցական կապերը) և հասարակության քաղաքական կառուցվածքի վրա (նպաստելով ուժեղ կենտրոնացված տերությունների՝ բռնապետությունների հաստատմանը»[3]։ Նշված եզրահանգումները ելնում են Ֆ. Էնգելսի այն դրույթից, որ հին համայնքները «հազարամյակների ընթացքում կազմել են արևելյան դեսպոտիզմի ամենակոպիտ ձևի հիմքը...։ Միայն այնտեղ, որտեղ դրանք քայքայվել են, ժողովուրդներն իրենց ուժերով շարժվել են զարգացման ուղիով»[4]։

Օսմանյան կայսրությունում համայնքներն իրենց տարբեր ձևերով պահպանվեցին ավելի քան 500 տարի՝ որպես գյուղական համայնքներ, կրոնական և ցեղային կազմակերպություններ, արհեստակցական և այլ միավորումներ։ Դրանց երկարակեցության հիմքերը, գոյության առաջին շրջանից մինչև վերջը, մնացին արտադրական-մասնագիտական և կրոնական հատկանիշները, որոնք չափազանց կայուն էին հատկապես մահմեդական երկրներում և, մասնավորապես, դարեր շարունակ իսլամի պատվարը հանդիսացող Օսմանյան կայսրությունում։ Ս. Կլյաշտորնին գտնում է, որ նշված փոխհարաբերություններին հատուկ էին «արխաիզմը, հետամնացությունը, տոհմատիրական և ռազմական դեմոկրատիայի շրջանում ձևավորված նորմաներին զուգորդելը։ Մինչև 18-րդ, երբեմն նաև 19-րդ դդ. քոչվորները քաղաքական և հասարակական հարաբերություններում մնում էին որպես այդ երկրների զարգացումը կասեցնող ուժ»[5]։

Վերջապես, իր բացասական ազդեցությամբ պատմականորեն վճռական դեր կատարած գործոններից մեկը հողի պետական սեփականությունն էր։ Լինելով տիրապետող համայնական փոխհարաբերությունների արդյունք, որ ձեռք էր բերվում հաղթական արշավների ու նորանոր դրվումների հետևանքով, հողը և ընդհանրապես ավարը դիտվում էին որպես համայնքի, ցեղի և ցեղապետի սեփականություն։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, արշավող ցեղերն իրենցն էին համարում գրաված բոլոր հողերը և դրանց հետ վարվում էին որպես «սեփականության, բայց նրանք երբեք չէին օրինականացնում այն իբրև սեփականություն...։ Այստեղ յուրացվում և վերարտադրվում է իրականում միայն անասունների հոտը, ոչ թե հողը, որը, սակայն, օգտագործվում է ամենուր, որպես ժամանակավոր իջևանավայր»[6]։ Օգտագործվելուց հետո այդ հողերը թողնվում էին քայքայված վիճակում։ Սակայն, պետական միավորումների ձևավորման պրոցեսում, ստեղծվեցին քիչ թե շատ մշտական սահմաններ, և դրանց ներսում հողատեր դարձավ պետությունը, իսկ հողային հարկը կազմեց նրա եկամտի կարևոր աղբյուրներից մեկը։

Օսմանյան կայսրությունում ֆեոդալիզմի դանդաղ զարգացման հիմնական պատճառներից էին նաև հողօգտագործման ձևերը։ Հողի պետական սեփականություն լինելու հանգամանքը սկզբնական շրջանում միանգամայն հասկանալի ու տրամաբանական էր և խաշնարած ցեղերի համար համայնական արոտավայրերը պահպանելու միջոց ու ձև էր։ Ավելի ուշ, երբ իշխանությունները ռազմական ու պետական ծառայության դիմաց առանձին անձանց հողեր էին տրամադրում (թիմար, զիամեթ և խասս), նոր տերերը դրանք օգտագործում էին ոչ որպես հոգատար սեփականատերեր, որոնք մտահոգված էին դրանց որակն ու բերքատվությունը բարձրացնելու խնդրով։ Ռազմիկներին հողը պետք էր սոսկ որպես եկամտի, հատկապես տուրքերի և դանձաղան

[3] «Вестник МГУ», 1977, № 4, с. 7.
[4] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 20, с. 185.
[5] «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)» М., 1962, с. 405.
[6] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. I, с. 480.

հարկերի հավելյալ աղբյուր։ Մինչև XVI—XVII դդ.՝ «հարձակման շրջանի» վերջը, նրանք պատերազմն ու ավարառությունը համարում էին իրենց նյութական ապահովության գլխավոր միջոցներից մեկը։ Իսկ հողի աշխատավորից, որը կիսարար կամ մարաբա գյուղացու իրավունքով էր մշակում հողը, նրանք կորզում էին բերքի ոչ միայն իրենց պատկանող մասը։ Հողի աշխատավորի և նրա ընտանիքի նվազագույն կենսամակարդակի ապահովումը կամ աշխատավորական ուժի վերարտադրումը հողատիրոջ հոգսի առարկա չեն եղել նրա ամբողջ տիրապետության ընթացքում։ Մինչդեռ ռայան պարտավոր էր բնատուրքի ձևով վճարել պետական հարկերը և հոգալ տիրոջ ծախսերն ու ամբողջ ընտանիքով կատարել իր վրա դրված սպասարկելու բոլոր պարտականությունները։ Ընդհանրապես հարկերի գանձման կապալային սիստեմը և տիրապետող կամայականություններն իսկական չարիք էին ժողովուրդների համար։ Այդ ամենի հետևանքով ռայան չէր կարողանում կուտակումներ կատարել և սննդամթերքի ավելցուկը շուկայում վաճառել։ Այսպիսով ռայան կամ մանր արտադրողը դարեր շարունակ համարյա շահագրգռված չէր պայքարելու բերքատվության բարձրացման համար, քանի որ երբեմն չէր ստանում նույնիսկ ընտանիքն ապահովելու համար անհրաժեշտ սննդամթերք, չուներ գոնե աննշան կուտակում՝ տեղական առևտրին մասնակցելու համար։ Իր պահանջները նա բավարարում էր սեփական սուղ միջոցներով, փակ տնտեսության շրջանակում, որի հետևանքով չէր ձևավորվում տեղական շուկան և տնտեսական կապերը դժվարությամբ էին հաստատվում առանձին տնտեսությունների և բնակավայրերի միջև։ «Ասիայում,— գրել է Կ. Մարքսը,— որտեղ հողային ռենտայի նատուրալ ձևը, որ պետական հարկերի գլխավոր տարրն է միաժամանակ, հենվում է արտադրական հարաբերությունների վրա, որոնք նույնպիսի անփոփոխ ձևով են վերարտադրվում, ինչպես բնական հարաբերությունները,— վճարման այդ ձևը հետադարձ ազդեցությամբ ամրապնդում է, իր հերթին, արտադրության հին ձևերը։ Նա կազմում է թուրքական կայսրության ինքնապահպանության գաղտնի միջոցներից մեկը»[7]։ Պատմական այս իրողության մյուս կողմն Արևելքի երկրներում աշխատանքի հասարակական բաժանման բացակայությունն էր, այսինքն հողագործության և տնային արհեստների երկարատև համագոյակցությունը։ Կ. Մարքսի կարծիքով նման համատեղությունը երկար ժամանակ այստեղ հանդիսացել է տիրապետող արտադրաեղանակի կամ հասարակարգի լայն ու ամուր հիմքը։ Վ. Ի. Լենինը ևս դեպի ապրանքային՝ ավելի բարձր զարգացման հասած տնտեսություն հասարակական առաջընթացի միակ պայմանը համարում էր «աշխատանքի հասարակական բաժանումը»[8]։

Օսմանյան կայսրության ստեղծումից հետո անհրաժեշտ եղան 300 երկար տարիներ, որպեսզի Թուրքիան ֆեոդալիզմի ցածր, «բարբարոսական» աստիճանից որոշ քայլեր կատարեր դեպի այդ հասարակարգի հասունության աստիճանը։ Նշված ժամանակաշրջանի ընթացքում ներքուստ սկսվեց քայքայվել ռազմաավատական հողային կարգը, ժամանակավոր (ծառայության համար տրված) հողը հետզհետե դարձավ փաստական սեփականություն։ XIX դ. կեսերին հողի պետական սեփականությունն արդեն կրում էր ձևական բնույթ։ Բազմաթիվ աղբյուրներ նշում են, որ պետությանը պատկանող հողերը՝ «էրազի միրիե» (կամ «էմիրիե»), նշանակալից մասով դարձան մասնավոր անձանց սեփականություն, և հողօգտագործման այս ձևն անցյալ դարի վերջին ամենատարածվածն էր կայսրությունում։ Հողային հարաբերությունների քայքայմանը զուգահեռ, երկրի որոշ շրջաններում էր միայն տեղի ունենում հողերի ֆեոդալականացման պրոցես։ Հին շահագործողին՝ սիպահիին, որի համար ամենակարևորը պատերազմն էր և ռազմական ավարը, նշում է Ա. Միլլերը, XVI դ. վերջերից փոխարինում է նորը՝ «հողատերը, որն ավելի ագահ է

7 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 151։
8 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 21։

դեպի փողը, որի նպատակն է գյուղացու աշխատանքը շահագործելու միջոցով առավելագույն եկամուտ ստանալը»[9]։

Օսմանյան ֆեոդալիզմն իր զարգացման ընթացքում որոշ ոլորտներում ինչ-որ չափով մոտենում էր արևմտյան ձևերին։ Սակայն այն, ամբողջապես վերցրած, մնաց կես ճանապարհին, պահպանելով հնի ազդեցությունը, վերջնականապես չկանգնելով զարգացած ֆեոդալիզմի հիմքերի վրա։ Տնտեսության հիմնական բնագավառում՝ գյուղատնտեսության մեջ, տիրող այս երկվությունը ևս ունեցավ իր բացասական ազդեցությունը Թուրքիայի ընդհանուր առաջընթացի վրա։ Այդուհանդերձ, հետևհետե հասունանում էին սոցիալական այն հարաբերություններն ու ուժերը, որոնք երկրի տնտեսական զարգացումը դանդաղորեն տարան դեպի կապիտալիզմի ուղին։ Առաջին հերթին, դրանք այլազգի բուրժուազիայի՝ կայսրության պայմաններում բավական կազմակերպված խմբերն էին։ Իրենց գործունեության մեջ նրանք հաճախ հենվում էին ազգային համայնքների (միլլեթ) աջակցության վրա։ Սակայն դրանց հիմնական պատվարը հանդիսանում էին երկրի տնտեսության մեջ ունեցած դիրքերը, որոնք առանձին բնագավառներում տիրապետող էին։ Այլազգի բուրժուազիան զգալի կապեր ուներ երկրի ներսում և արտասահմանի առևտրական կենտրոնների հետ։ Առևտրի ու արդյունաբերության ասպարեզում հասունացել էր սպասարկող անձնակազմը։ Կայսրության մեջ ստեղծվել էին բոլոր օբյեկտիվ պայմանները, որպեսզի ոչ թուրք (և ոչ մահմեդական) բուրժուազիան հանդես գար որպես տնտեսության ղեկավար ուժ և այդպիսով խթան հանդիսանար կապիտալիզմի նորմալ զարգացման ու թուրք ազգային բուրժուազիայի ձևավորման համար։ Նշված բնականոն երևույթները ստեղծել էին նվազագույն անհրաժեշտ պայմաններ՝ նոր հասարակարգի քիչ թե շատ նորմալ առաջընթացի համար։ Բայց թուրք վերնախավի մենաշնորհն էին պետական, ռազմական, վարչական բոլոր պաշտոնները, և իր ամբողջ քաղաքականությամբ նա սահմանափակում կամ արգելակում էր այլազգի բուրժուազիայի գործունեությունը։ Վերջինիս նկատմամբ մինչև այդ գոյություն ունեցող որոշ հանդուրժողական վերաբերմունքը զգալիորեն նվազեց, երբ սկսեց ձևավորվել թուրք ազգային բուրժուազիան։ Կայսրության վերնախավի հարստահարություններին և կամայականություններին XIX դ. վերջերին ավելացավ թուրք բուրժուազիայի պայքարն իր դասակարգային մրցակիցների դեմ։ Տնտեսության բնագավառում լինելով անզոր, այն օգտագործում էր քաղաքական իշխանությունների իրավունքները՝ նեղելու այլազգի բուրժուազիային, դուրս վտարելու նրան տնտեսության որոշ բնագավառներից կամ գոնե սահմանափակելու նրա ազդեցությունը։ Երկրում ստեղծվել էր մի հակասական վիճակ, երբ կապիտալիստական հարաբերություններն իրենց ակտիվորեն զարգացնող տարրերին խանգարում էին կատարելու իրենց պատմական առաքելությունը։ Դժբախտությունն այն էր, որ նկարագրված ոչ նորմալ փոխհարաբերությունները ժամանակավոր երևույթ չէին։ Դրանք հանդիսացան կապիտալիստական համակարգի զարգացման տեմպերը դանդաղեցնող գործոն՝ մինչև կայսրության անկումը բռնի միջոցներով, իսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանգեցրին այլազգի բուրժուազիայի տնտեսական թուլացմանը կամ ֆիզիկական ոչնչացմանը։ Մյուս կողմից, կայսրության տիրող շրջանները երբեք չեղան կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար այնքան անհրաժեշտ ռեֆորմների հետևողական կողմնակիցներ։ Ընդունված օրենքները կա՛մ չէին գործադրվում ու մնում էին թղթի վրա կամ էլ չէին ապահովում սեփականության և անձի անձեռնմխելիության իրավունքը։ Եթե Եվրոպայի երկրներում դրանք իրապես դարձան բուրժուական հարաբերությունների և ընդհանուր առաջընթացի կարևորագույն կվանները, ապա օսմանյան պետության մեջ օրինականությունը կամ օրենսդրությունը չդարձան լուրջ գործոններ, քանի որ

[9] «Всемирная история», т. V, М., 1958, с. 205.

ամենուր օրենք էր մեծ ու փոքր իշխանավորների, ավազակի ու զորքայի կամքը։ Իսկ բռնատիրական կարգերում պետական ապարատը և գործիչները միշտ էլ եղել են իրերի վիճակն անփոփոխ պահելու կողմնակիցներ, և Թուրքիան դրա դասական օրինակներից է։

Խոսելով տնտեսական կյանքում պետության դերի մասին, Ֆ. Էնգելսը դա համարում էր չափազանց կարևոր գործոն երկու իմաստով։ Որպես հասարակության ղեկավար ուժ, պետությունը կարող էր միանգամայն դրական և նույնքան էլ բացասական ազդեցություն ունենալ զարգացման պրոցեսի վրա։ «Տնտեսական շարժումը,— գրում է Ֆ. Էնգելսը,— ընդհանուր առմամբ կհարթի իր ճանապարհը, բայց նա կզգա քաղաքական շարժման հակազդեցությունը, շարժում, որին ինքն էր ստեղծել և որն ունի հարաբերական ինքնուրույնություն։ Տնտեսական շարժման վրա ազդում է, մի կողմից, պետական իշխանության շարժումը, իսկ մյուսից՝ վերջինիս հետ միաժամանակ ծնված օպոզիցիան»[10]։ Կայսրության տնտեսական զարգացման վրա պետական իշխանության ազդեցությունը, ինչպես ասվեց, եղել է բացասական։ Իսկ թե ինչ խորություն և ծավալ կունենար նման ազդեցությունը, կարելի է պատկերացնել՝ վերլուծելով նրա ֆունկցիաներն անվանական իմաստով և փաստական տվյալներով։

Ըստ Ն. Տոդորովի, «պետական կարգավորումն իր համապարփակ բնույթով օսմանյան ֆեոդալիզմի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն է»[11]։ Համաձայնելով նման ձևակերպման հետ, Թուրքիայում արհեստների զարգացման վերաբերյալ իրենց հոդվածում Ա. Հաջյանը և Մ. Զուլալյանն այդ երևույթը գնահատում են որպես չափազանց բացասական։ «Պետական կարգավորումը,— գրում են նրանք,— արհեստների արտադրության համար ունեցավ աղետաբեր արդյունքներ։ Իր տնտեսական քաղաքականության մեջ օսմանյան պետությունը ղեկավարվում էր, ամենից առաջ, ֆեոդալական դասակարգի պահանջներով և կարիքներով։ Նրա պահանջները բավարարելու նպատակից բացի նա չէր մտածում հեռանկարների մասին և ոչ միայն չէր հեռացնում արտադրության զարգացման ճանապարհին գտնվող արգելքները, ինչպես այն կատարվում էր Եվրոպայում, այլև ամենաբարբարոս ձևով կասեցնում էր արտադրողական ուժերի զարգացումը»[12]։ Իրերի նման վիճակը պահպանվեց մինչև կայսրության գոյության վերջին փուլը։ Երիտթուրքերի հեղափոխությանը նվիրված իր մենագրության մեջ Վ. Շպիլկովան ևս ընդգծում է պետության բացասական ազդեցությունը երկրի տնտեսական կյանքում։ «Պետությունը Օսմանյան կայսրությունում,— գրում է նա,— կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ խաղում էր արգելակող դեր։ Նա բոլորովին չէր նպաստում կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը»[13]։

Թուրքիայի ֆեոդալիզմի շրջանի պատմության հայտնի մասնագետ Ն. Իվանովը ևս այդ երկրի սոցիալական կարգի հիմնական գծերից մեկը համարում է «պետության բացարձակ գերակշռությունը հասարակության վրա»[14]։ Միաժամանակ նա գտնում է, որ պատմության առանձին շրջաններում պետության կենտրոնացված ազդեցությունն ունեցել է հաճախ մակերեսային և նույնիսկ ձևական բնույթ։ Իսկ տնտեսական կյանքում գերակշռող էին լրիվ ապակենտրոնացումը, ինքնամփոփ վիճակը և ինչպես այլ ֆեոդալական երկրներում՝ նրա տնտեսական կենտրոնների միջև կապերի բացակայությունը։ Որևէ մասնավոր սեփականություն, որպես այդպիսին, Ն. Իվանովի ձևակերպ-

---

10 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 37, с. 417.

11 Н. Тодоров, Балканский город XV—XIX веков, М., 1976, с. 112.

12 «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. X, Երևան, 1979, էջ 197։

13 В. И. Шпилькова, Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977, с. 13.

14 «Народы Азии и Африки», 1978, № 3, с. 57.

մամբ անհուսալի, խախուտ վիճակում էր գտնվում և ամբողջապես կախում ուներ «իշխանության զիջողամտությունից և ամեն րոպե կարող էր անցնել պետության ձեռքը»[15]։ Հետևաբար, տնտեսական գործունեության ընդլայնումը որևէ անձնավորության համար և որոշակի լինել և իրականանալ չէր կարող, «եթե բախտը չժպտար»։ Նման պայմանների ուղղակի ազդեցության հետևանքով, նույնիսկ XIX դ., չէր կարող լրջորեն տեղի ունենալ կապիտալիզմի զարգացման հիմնական, կարևոր ու սկզբնական պրոցեսը՝ կապիտալի նախնական կուտակումը, որն անհրաժեշտ նախապայման էր կապիտալիզմի զարգացման համար։ Կապիտալի կուտակմանը նվիրված մի աշխատության մեջ այդ պրոցեսի բախտը նույնպես կապվում է երկրի քաղաքական ու պետական դարգերի հետ։ «Ամեն կասկածից վեր է այն իրողությունը,— նշված է այդ աշխատությունում,— որ պատմական պատճառների հետևանքով կապիտալի կուտակման գործը Թուրքիայում դանդաղեց և դրամագլուխը մեծացնելու մեջ լուրջ արգելքներ առաջացան։ Այս իսկ պատճառով քաղաքական վատառողջ կաղմ ունեցող կայսրության մեջ կապիտալի կուտակման ու նոր արտադրական միջոցների զարգացման գործը ձախողվեց»[16]։ Այնուհետև աշխատության մեջ նշվում է, որ իշխանավորները հավաքված մեծ գումարները «որպես դրամագլուխ օգտագործելու փոխարեն կա՛մ թանկարժեք իրեր էին գնում և պահում իրենց տներում, կա՛մ ձեռք էին բերում կալվածքներ»[17]։ Ինչպես բազմաթիվ մահմեդական հեղինակների մոտ, այս աշխատությունում ևս ակնարկ է արվում, որ առևտրից ստացած շահը, ըստ շարիաթի և իսլամի դոգմաների, «ապօրինի է համարվում» և այս պատճառով էլ խաթարվում էր կուտակման պրոցեսը։ Սակայն հանրահայտ է, որ դրամը կրոն չի ճանաչում։ Կրոնական կազմակերպություններն ու առանձին գործիչները լայնորեն մասնակցում էին տնտեսական կյանքին, տեղական առևտրին, վաշխառուական գործարքներին։ Այս ամենը, ի վերջո, բացասական ազդեցություն էր ունենում և իր ծանր կնիքն էր դնում Թուրքիայի տնտեսության վրա՝ դանդաղեցնելով երկրի առաջընթացը։ Միանգամայն իրավացի է Մ. Մեյերը, երբ հոգևորականության բարոյական, իրավական ու տնտեսական զգալի միջամտությունը համարում է «Օսմանյան կայսրության ներքին թուլության պատճառներից մեկը, որը նպաստեց նրա անկմանը»[18]։

Պատմական իրավիճակը, որի պայմաններում կայսրությունում ձևավորվում էին կապիտալիստական հարաբերությունները, նպաստավոր չէր վերջիններիս զարգացման համար։ Տիրապետող Թուրք ժողովրդի ազգային բուրժուազիան, ինչպես նշվեց, սերում էր ֆեոդալիզմի պատվարը հանդիսացող հողատերերից, խոշոր անասնատերերից, ցեղապետերից կամ գավառական վերնախավի ներկայացուցիչներից, պետական պաշտոնյաներից, զինվորականներից։ Վերջիններս, իրենց հերթին, սերտ կապեր էին պահպանում ֆեոդալական սեփականատիրության հետ։ Պահանջվեցին տասնամյակներ, որպեսզի Թուրք բուրժուազիայի շարքերում իրենց տեղը գրավեին արդյունաբերության շահերը ներկայացնող կապիտալիստները։ Այս հանգամանքը ևս զարգացումը դանդաղեցնող գործոններից էր։

Այդպիսով, ներքին անբարենպաստ պայմանները հանդիսացան երկրի հետամնացության հիմնական պատճառը։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել արտաքին գործոնի՝ մեծ տերությունների ու իմպերիալիստական մոնոպոլիաների քայքայիչ ազդեցությունը Օսմանյան կայսրության տնտեսության վրա XIX—XX դդ. ընթացքում։ Հանրահայտ է, որ նման երևույթը ճակատագրական նշանակություն է ունեցել հատկապես թույլ զարգացած երկրների վրա։

---

15 Նույն տեղում, էջ 60։

16 „Türkiye'de sermaye piyasasının kurulması", Istanbul, 1964, s. 75.

17 Նույն տեղում, էջ 54։

18 «Вопросы истории», 1979, № 12, с. 125.

Բացարձակ կախման վիճակ ստեղծվեց գաղութների համար։ Կոնսերվացվեցին ֆեոդալական հարաբերությունները և զգալիորեն դանդաղեց կիսագաղութների տնտեսական զարգացումը։ Արևելքում տեղի ունեցող այս համընդհանուր երևույթը բոլոր երկրների համար միատեսակ չեղավ, քանի որ պատմությունը չի պատճենահանում նշված երևույթները։ Օսմանյան կայսրության կիսագաղութ դառնալու ընթացքը ևս ունեցել է իր առանձնահատկությունները։ Առաջինն այն էր, որ այդ հզոր պետությունն ինքը ողորմածաբար ընդառաջեց օտար կապիտալի, առևտրականների ու պետությունների ցանկությանը՝ հաստատելու փոխադարձ տնտեսական կապեր, որը և ձևակերպվեց կապիտուլյացիոն համաձայնագրերի միջոցով։ Երկրորդ. երկրի կառավարիչները որպես հարստանալու կարևոր աղբյուր ընդունեցին եվրոպական երկրների «օգնությունը», որի բուն նպատակը պետք է լիներ առևտրի ու արդյունաբերության զարգացմանը սատարելը։ Այսպիսով, երկրի գործիչների և օտար կապիտալի շահերը համընկան։ 1830-ական թվականներին և ավելի ուշ կնքած առևտրական պայմանագրերը պաշտոնապես թույլատրեցին եվրոպական կապիտալի հոսքը ներքին առևտրի ասպարեզ։ Նույն ժամանակաշրջանում, մեկ երկու տասնամյակի ընթացքում, օսմանյան պետության տարբեր շրջաններում «պետական վարկի օգնությամբ ստեղծվեցին մոտ 15 ձեռնարկություններ, որոնք կառուցված էին եվրոպական ոճով և կահավորված էին ներմուծված մեքենաներով»[19]։ Բազմաթիվ են օրինակները, որոնք ցույց են տալիս, որ պետական պաշտոնյաների անձնական շահագրգռվածությունը հաճախ կարևոր դեր էր կատարում արտաքին փոխառությունների ու վարկի ստացման գործում։ Երրորդ. Օսմանյան կայսրությունը միայն իր գոյության վերջին շրջանում՝ անցյալ դարի չորրորդ քառորդում, ընկավ ծանր տնտեսական ու ֆինանսական կախման մեջ։ Արևմտյան տերությունների շահերը ներկայացնող պետական պարտքերը վարչությունը, որը հիմնադրվեց 1881 թ., դարձավ երկրի տնտեսությունը և հատկապես ֆինանսները ղեկավարող համարյա միակ կազմակերպությունը։ Շատ հաճախ, թուրքական կառավարության խնդրանքով, այն ապահովում էր նաև պետական հարկերի ու տուրքերի գանձումը։ Ի. Ալիբեկովն իրավացիորեն նշում է, որ «կորցնելով հսկողությունը սեփական ֆինանսների վրա, Թուրքիան երկար ժամանակ խաթարեց երկրի արտադրողական ուժերի զարգացումը»[20]։

Փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ, Իրանի և Չինաստանի հետ համեմատած, օտար կապիտալի մուտքը Թուրքիա ընթացել է «խաղաղ» ճանապարհով։ Ուրեմն, նա այդ ճանապարհին երբեք արգելքներ չունեցավ, գոնե պրոտեկցիոնիզմի քաղաքականության ձևով։ Նշված առանձնահատկություններն արդյունք էին, առաջին հերթին, երկրի ներքին զարգացման օրինաչափությունների, որոնք կայսրության վերնախավի բարեհաճ վերաբերմունքի հետևանքով լայնորեն օգտագործվեցին օտար պետությունների կողմից։

Հիշատակված օրինաչափություններից մեկը տվյալ ժամանակաշրջանի քաղաքական հետադիմական այն վարչակարգն էր, որն իր ծանր կնիքը դրեց ներքին ամբողջ կյանքի վրա և պատմության մեջ մտավ «զուլում» անվան տակ։ Այդ ժամանակաշրջանում և հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին ու դրանից հետո ծավալվեց մահմեդական ֆանատիկ տարրերի պայքարը քրիստոնյա ժողովուրդների նոր թափ առած ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Սկսվեց մի սանձարձակ տնտեսական տեռոր ամբողջ քրիստոնյա բնակչության դեմ, որի ընթացքում վերջինս կորցրեց մշակվող հողերի խոշոր տարածություններ, մեծ քանակով անշարժ ու շարժական գույք և այլ հարստություններ։

---

[19] Н. Тодоров, նշվ. աշխ. էջ 256։

[20] „Etudes balkaniques", 1975, № 3, p. 88.

Անօրինականության և կամայականությունների այս ալիքը հաղիվ էր հանդարտվել, երբ ծայր առան 1894—1896 թթ. հայկական ջարդերը, որոնք բերեցին նոր ալեր, կողոպուտ ու մի շարք շրջանների առևտրական կապերի խախտում, արտադրության նվազում և տնտեսական անկում։ Այդ գեպքերին հետևեցին հույն-թուրքական պատերազմը, հունական ապրանքների բոյկոտը և քաղաքական այլ միջոցառումներ։ Այդպիսով, երկու տասնամյակների ընթացքում երկրի տնտեսական բնագավառի ակտիվ տարրերը մի շարք ծանր հարվածներ կրեցին։ Ընդհանուր առաջընթացի գանդաղ և անբարենպաստ ֆոնի վրա երկրի ներքին վիճակն ավելի մուգ գույներ ընդունեց։ Նրա կառավարիչների վարած քաղաքականությունն ի վերջո արագացրեց անկման պրոցեսը։ Բարենորոգումների բոլոր փորձերը չտվեցին ցանկալի արդյունքներ, չկարողացան ամրոցել երկրի վերքերն ու ամրապնդել օսմանյան պետականությունը։ Թուրքիայի առաջադեմ գործիչներն անցյալ դարի վերջերից սկսած կայսրությունը փրկելու միակ միջոցը համարում էին Աբդուլ-Համիդի ռազմաֆեոդալական դիկտատուրայի վերացումը։ Մամուլում թուրք հայրենասերների հրապարակած մի հայտարարության մեջ ասված էր. «Եթե Թուրքիան մի բռնավորի փոխարեն ունենար մի իմաստուն միապետ, որը հենվեր բոլոր ցեղերի ու ներկայացուցիչների բաղկացած պատգամավորական ժողովի վրա, ապա նա կփրկվեր»[21]։ Երիտթուրքական կուսակցության կենտրոնական օրգան «Մեշվերեթ» թերթի առաջնորդողներից մեկում կարդում ենք հետևյալ ծրագրային հայտարարությունը. «Հեղափոխությունը, որը կազմակերպված ու գործադրված է բացառապես հայրենիքի զավակներուն կողմե, պիտի նպատակակետ ունենա Աբդուլ-Համիդի բացարձակ իշխանությունը (այսինքն նրա տապալումը—Հ. Ի.) և ոչ թե մեր երկրի կրոնական և սոցիալական ճիմնարկություններ»[22]։ Վերջին խոստումը նրանք կատարեցին հետևողական կերպով, չփորձելով որևէ փոփոխություն մտցնել երկրի սոցիալ-քաղաքական կյանքում կամ լուծել սոցիալ-տնտեսական որևէ պրոբլեմ։ Հենց սկզբից նրանք ի լուր աշխարհի հայտնեցին, որ շարունակելու են «կողմնակից» մնալ սահմանադրական միապետության և Օսմանի արքայատոհմի պահպանման»[23]։

Կապիտալիստական կարգերի և ազգային բուրժուազիայի շահերի կարգավոր ճանաչված երիտթուրքերի կուսակցությունն իր ամբողջ գործունեությամբ, հատկապես տնտեսական բնագավառում, ցուցաբերեց գլխավորապես պահպանողականություն։ Պառլամենտի գոյությունն անգամ ի վիճակի չեղավ ստեղծելու բուրժուական դեմոկրատիային համապատասխանող տարրական պայմաններ։ Երիտթուրքերի իշխանության առաջին ամիսներին, նկարագրելով Թուրքիայի ներքին դրությունը, Կ. Պոլսում ռուսական դեսպան Ի. Զինովևն իր վերադասին հաղորդում էր. «Թուրքերը, որոնք իրենց համարում են ընտրյալ ռասսա, չեն կարողանում հաշտվել հավասարության սկզբունքի հետ, որ հրապարակել է սահմանադրությունը»[24]։ Իրականում սահմանադրությունը որևէ ազդեցություն չունեցավ Թուրքիայի հասարակական կյանքի վրա. դասակարգային և ազգամիջյան փոխհարաբերություններն ավելի ևս սրվեցին։ Տիրապետող ազգի ներկայացուցիչներն ու գործիչները մտածել անգամ չէին ցանկանում ժողովուրդների իրավահավասարության հնարավորության մասին։

Կայսրության սոցիալական ու քաղաքական կյանքում, այդպիսով, վճռական նշանակություն ունեցավ երկրի կառավարիչների գործունեության հիմքում ընկած չափազանց բացասական մի երևույթ՝ արտադրողական պրո-

---

21 Ս. Սապահգուլյան, Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1903, էջ 15։

22 «Երկրի ձայնը», 1908, № 2, էջ 6։

23 Նույն տեղում։

24 Архив внешней политики России, ф. Политархив, д. 1034, л. 55.

ցնսից հեռու պահել հիմնական արտադրողներին՝ ժողովրդական մասսաներին։ Մի դեպքում դա թուրք և մահմեդական ժողովուրդներն էին, որոնց հիմնական ֆունկցիաներից մեկը բանակում ծառայել ու պատերազմներին մասնակցելն էր, որը նրանց համար նաև ապրուստի և հարստացման գլխավոր միջոցներից էր։ Մյուս դեպքում՝ տարվող քաղաքականությունը խանգարում էր քրիստոնյա և այլ հպատակ ժողովուրդներին՝ ընդլայնելու արտադրությունը, արագացնելու զարգացման ընթացքը և երկրում ստեղծելու կայուն տնտեսական վիճակ։ Այնուհետև, պատերազմական գործողությունների պատճառով երկրի ներքին կյանքը միշտ լարված էր։ Դրանց մասնակցող թուրքերն ու մյուս մահմեդական ժողովուրդները մշտապես ենթակա էին նյութական և մարդկային կորուստների, որոնք շատ հաճախ քայքայում էին առանձին ընտանիքներ, համայնքներ ու բնակավայրեր։ Նման երևույթներն իրենց կնիքը դրեցին թուրք ժողովրդի ընդհանուր, դանդաղեցված տնտեսական ու կուլտուրական զարգացման վրա։ Իսկ հպատակ ժողովուրդները, որոնք առանց այն էլ հալածվում և հարստահարվում էին, ռազմական գործողությունների ժամանակ ուղղակի որեն կողոպտվում էին, ունեզրկվում և քայքայվում տնտեսապես, խաթարվում էր նրանց բնականոն զարգացման ընթացքը։ Այդ պայմաններում ձևավորվեց և ամրապնդվեց Օսմանյան կայսրության պետական և քաղաքական ռեժիմը։ Իր համարյա վեցդարյա գոյության ընթացքում այն հանդիսացավ ֆեոդալական կարգերի, ռազմաբյուրոկրատական վարչաձևի ամուր պատվարը։ Շնորհիվ կառավարման այդ պահպանողական ձևերի՝ բուրժուական հարաբերությունների զարգացման պրոցեսը մինչև վերջ ընթացավ և այսօր էլ մասամբ ընթանում է ֆեոդալական կարգերի և սովորույթների տիրապետող ազդեցության պայմաններում։

Թուրքական կապիտալը, նշեցինք, մեծ մասամբ ներդրվում էր առևտրի ոլորտը։ Թուրքական բուրժուազիան, մինչև կայսրության անկումը, լրջորեն չկապվեց արդյունաբերության հետ ու չստեղծեց լուրջ սոցիալական, դասակարգային հիմքեր երկրի տնտեսության մեջ։ Մյուս կողմից, այն համարյա չունեցավ զարգացման նախապատրաստման շրջան, մասնավորապես, քաղաքականության բնագավառում, որը պետք է հենվեր ձևավորված գաղափարախոսության վրա։ Սկզբից մինչև վերջ բուրժուազիան բավարարվում էր ֆեոդալական գաղափարախոսության տված սննդով։ Անգամ նացիոնալիզմն ու շովինիզմը, որոնք կապիտալիզմի զարգացման ուղղակի արդյունքն են, թուրքական առդային բուրժուազիան վերցրեց ֆեոդալական պատրաստի ձևերից և իրենը հայտարարեց օսմանիզմն ու պանիսլամիզմը, պանթուրանիզմն ու պանթյուրքիզմը։ Բառիս իսկական իմաստով չունենալով կազմակերպված և գաղափարապես կոփված իր քաղաքական կուսակցությունը, քանի որ երիտթուրքերին այդպիսին չի կարելի համարել, թուրքական բուրժուազիան ևս հարեց ֆեոդալական-միապետական գաղափարախոսությանը և քաղաքական աշխատանքի ձևերին։ Դեպքերի զարգացման նշված ընթացքին նպաստեց նաև XIX դ. կիսագաղութ դարձած կայսրության ներքին ռեակցիոն ուժերի և իմպերիալիզմի ձևավորված միասնական ճակատը։ Վերջինիս անմիջական արդյունքը հանդիսացան երիտթուրքերի պանթուրքիստական ձգտումների իրականացման փորձերը՝ գերմանական իմպերիալիզմի աջակցությամբ։ «Տասնյակ հաղարավոր զոհերի գնով Կովկասի, Թուրքեստանի, Հնդկաստանի գրավման երիտթուրքական ավանտյուրան,— գրել է «Պրավդան».— ոչ միայն կրախի մատնվեց, այլև արագացրեց Օսմանյան կայսրության կործանումը»[25]։

Այսպիսով, Օսմանյան կայսրությունն իր երկարատև գոյության ընթացքում հետզհետե վերածվեց (և՛ քաղաքական, և՛ տնտեսական իմաստով) նրանում բնակվող ժողովուրդների բանտի, նրանց առաջընթացը խանգարող ու արգելակող ուժի։ Իսկ ոչ թուրք ավելի զարգացած ժողովուրդների համար

---

25 «Правда», 22.IV.1982.

այն դարձել էր ռեակցիոն վերապրուկ՝ դեռևս հարյուրամյակներ առաջ։ Կայսրությունը հինգ դար կասեցրել էր հպատակ ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման ընթացքը։

Ինչպես տեսնում ենք, պատմությունը վաղուց արդեն կայացրել էր իր դատավճիռը։ Այլ ժողովուրդների և ազգերի հարստահարող ու կեղեքող տարրերի տիրապետությունը, ինչ ձև էլ նա ունենա, չի կարող լինել հարատև։ Այն պետք է տապալվի։ Օսմանյան կայսրության անկումը, որպես պատմականորեն օրինաչափ և պրոգրեսիվ երևույթ, հաստատում է առաջընթացի ճանապարհին կանգնած նույնիսկ հզոր արգելակների խորտակման անխուսափելիությունը։

О СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИХ ПРИЧИНАХ ПАДЕНИЯ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

ОВАНЕС ИНДЖИКЯН

Резюме

Причины экономической отсталости и краха Османской империи зародились в процессе ее становления и органически были связаны с историей государства. Основными вехами, характеризующими ход развития страны, являлись: многовековое существование кочевничества, патриархально-племенные и феодальные отношения, государственная собственность на землю, длительное господство военно-ленной системы в сочетании с издольщиной и преобладанием парцеллярного крестьянского хозяйства, веками существовавшая натуральная рента и разорительная налоговая система, отсутствие дорог и экономических связей между отдельными районами, резкая разница в уровне их развития, непрерывные войны и абсолютное господство военно-бюрократического аппарата.

Капиталистическое развитие замедлялось политикой ограничения деятельности буржуазных элементов и, особенно, инонациональной буржуазии, более активной и динамичной, чем сформировавшаяся позднее турецкая буржуазия. Государство не только не содействовало, но и мешало экономическому прогрессу страны. Почти не происходило первоначального накопления капитала. Отрицательное воздействие этих факторов усугублялось превращением империи в полуколонию, усилением влияния империалистических держав. Вся внутренняя политика Османской империи фактически была направлена на отделение производителя от производства.